ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 5. Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորությունները բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառում

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր իրավասության շրջանակներում՝

1) իրականացնում է բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման միասնական պետական քաղաքականություն.

2) ապահովում է Հայաստանի Հանրապետության սանիտարական օրենսդրության պահանջների կատարումը.

3) մշակում է պետական ծրագրեր՝ ուղղված հիվանդությունների կանխարգելմանը, վթարների, տարերային աղետների հետևանքների, բնակչության զանգվածային հիվանդությունների վերացմանը և թունավորումների կանխարգելման բնագավառում գիտատեխնիկական նվաճումների ներդրմանը.

4) սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում բնակչության բնակեցման և տնտեսական գործունեության վարման ապահովմանն ուղղված վարակիչ, զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների և թունավորումների տարածումը կանխելու և վերացնելու հատուկ պայմանները և ռեժիմը.

5) կնքում է համապատասխան միջազգային պայմանագրեր.

6) բնակչության շրջանում կազմակերպում է հիգիենիկ դաստիարակությունը և ուսուցումը, սանիտարահամաճարակային իրավիճակի վերաբերյալ ապահովում է անհրաժեշտ տեղեկատվություն ինչպես հանրապետական, այնպես էլ տեղական մարմինների միջոցով.

7) հաստատում է Հայաստանի Հանրապետությունում սանիտարահամաճարակային հսկողության և պետական գրանցման ենթակա ապրանքների ցանկերը.

8) հաստատում է սանիտարահամաճարակային հսկողության ենթակա ապրանքներին ներկայացվող սանիտարահամաճարակային և հիգիենիկ պահանջները.

9) հաստատում է սանիտարահամաճարակային հսկողության ենթակա ապրանքների սանիտարահամաճարակային և հիգիենիկ պահանջներին համապատասխանությունը հավաստող անվտանգության միասնական փաստաթղթի՝ պետական գրանցման վկայականի տրման կարգը, պետական գրանցման վկայականի և դրա հավելվածի ձևերը, ինչպես նաև պետական գրանցման վկայականի ռեեստրի վարման կարգը.

10) հաստատում է սույն օրենքով սահմանված եզրակացությունների տրամադրման կարգերը:

(5-րդ հոդվածը լրաց. 21.06.14 ՀՕ-136-Ն, 21.03.18 ՀՕ-162-Ն)

«11) Սահմանում է սանիտարահամաճարակային հսկողության ենթակա ապրանքների պետական գրանցման լիազոր մարմին:»: